ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ապաստանի տրամադրման վարչության

ապաստանի հայցի քննման

բաժնի պետ տիկին Սեդա Հարությունյանին

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2024 թվականի հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 12-ը ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ԱՏՎ ապաստանի հայցի քննման բաժնի փորձագետ Հերիքնազ Բագրատի Թիֆիլյանի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. մասնակցել է՝

1.1 ապաստան ստանալու դիմումների վարույթներին.

1.2 կատարել է ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում /«Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում/ տեղավորման աշխատանքները, պատրաստել ուղեգրերը, օրենսդրությամբ սահմանված իրավական, սոցիալական և այլ բնույթի օժանդակության տրամադրման աշխատանքներ.

1.3 վերջնական մերժում ստացած անձանց տվյալները ծառայության համապատասխան ստորաբաժանմանը փոխանցման աշխատանքներին՝ ՀՀ-ից նրանց արտաքսման գործընթացը կազմակերպելու նպատակով:

2. Ապահովել է ապաստան հայցող անձանց վկայականների երկարաձգման դիմումների ընդունման աշխատանքները:

3. Պատրաստել է ապաստան հայցող անձանց դրամական օգնություններ տրամադրելու որոշումները, գրությունները:

4. Ապահովել է Ծառայություն մուտք եղած գրությունների պատասխանների պատրաստումը:

5. Պատասխանել է էլեկտրոնային փոստով ստացված դիմումներին և պետական կառույցներից ստացված հարցումներին՝ կապված ՀՀ-ում ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ:

6. Ապահովում է Բաժնի համակարգով ելքային գրությունները /ապաստան հայցող դիմումատուների ծանուցումներ/:

7. Ապահովում է թարգմանիչների ներգավման աշխատանքները, պատրաստում բանավոր և գրավոր թարգմանչական վճարների խնդրագրերը, ժամանակացույցները:

8. Մասնակցում է Հայկական Կարմիր Խաչ ընկերության և «Առաքելություն Հայաստան» ՀԿ կողմից ապաստան հայցող անձանց հետ առնչվող գործառույթներին:

9. Պատասխանել է պետական և միջազգային կազմակերպություններից ստացված հարցումներին՝ կապված ՀՀ-ում ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ԱՏՎ ապաստանի հայցի քննման բաժնի փորձագետ՝ Հ.Բ.Թիֆիլյան

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները գնահատում եմ՝

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ԱՏՎ ապաստանի հայցի քննման բաժնի պետ՝ Ս. Հարությունյան

12.09.2024թ.